ԶԱՎԵՆ ՄԱՀՏԵՍԻ ԲԱԲԱՅԱՆ (1876-1925)

Օֆելյա Բաբայան
բ.գ.թ., պրոֆեսոր, ԱրՊՀ

Բանալի բառեր՝ *հոգևորական, Ղարաբաղի թեմ, Հայոց թեմական հոգևոր դպրոց, Էրզրումի թեմի առաջնորդ, ս. Գայանե, մահապարտների գունդ, Սարդարապատի ճակատամարտ:*

Մեր ժողովրդի պատմության քսաներորդ դարի հակասական ու հոգեցունց իրադարձությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմ, 1915թ. եղեռն, Հայկական Առաջին Հանրապետություն, Հայաստանի խորհրդայնացում, կուլակաթափություն, ստալինյան ռեժիմ, հայրենադարձություն, Երկրորդ համաշխարհային պատերազմ, անձի պաշտամունքի քննադատություն, պայքար անկախության համար, ԽՍՀՄ-ի քայքայում, Արցախյան պատերազմ, խոր հետք են թողել մարդկանց հոգեկերտվածքի ու մտածողության վրա: Այդ դարի 40-50-ականներին ծնված սերունդը տարիների հեռվից ուշացած փորձում է ընկալել ու իմաստավորել նախորդ տասնամյակների պատմական դեպքերն ու մարդկանց գործունեությունը, ճանաչել իր արմատները: Նույն ընտանիքում մեծացած հարազատ մարդիկ տարբեր ուղիներ են ընտրել, դարձել կոմունիստ, դաշնակցական, հոգևորական...

Մեծ հորեղբայրս՝ Անդրեյ Բաբայանը, կոմունիստ էր, երկար տարիներ աշխատել է մեր երկրամասի դատական, արդարադատության մարմիններում: Բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալուց հետո նշանակվել է Բաքվի նախկին Վորոշիլովի, Ձերժինսկու շրջանների ժողդատավոր: Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել է զինվորական տրիբունալի անդամ, նախագահ, պատերազմից հետո՝ Ադր ԽՍՀ փաստաբանների կոլեգիայի նախագահի տեղակալ, իրավաբանական կոնսուլտացիայի վարիչ: ԼՂ արդարադատության մարմինների երկարամյա աշխատող Բ. Տեր-Կասպարովը, ով Բաքվում Ա. Բաբայանի հետ աշխատել էր, նրա մասին գրում է. »Վերին աստիճանի համեստ ու ազնիվ մարդ էր«[1]: Թաղված է Բաքվի հայկական գերեզմանոցում(ո՞վ կարող էր մտածել,որ բազմազգ Բաքվում ազգերի վայրագները հիմնահատակ կքանդեն հայկական գերեզմանները):

Հորս հորեղբոր որդին՝ գնդապետ Մովսես Մահտեսի Բաբայանը, Շուշու ռեալական դպրոցի շրջանավարտ էր, Պետրոգրադի տեխնոլոգիական ինստիտուտն ավարտած ճարտարագետ: Երբ պայթում է առաջին աշխարհամարտը, ենթարկվում է զորակոչի, ուղարկվում զինվորական դպրոց, չորսամսյա դասընթացն ավարտելուց հետո որպես սպա ուղարկվում ճակատ: Ռուս նշանավոր զորավար Բրուսիլովի զորաբանակում աչքի է ընկնում իր քաջությամբ, արժանանում Գեորգյան երկրորդ և ապա առաջին աստիճանի շքանշանի և ոսկե թրի: Մովսեսն աշակերտական նստարանից դաշնակցական էր և Շուշիում դաշնակցական աշակերտական միության վարչության անդամ, լավ ձայն ուներ, երգում էր թեմական դպրոցի քառաձայն խմբում թե' պատարագի, թե' միջոցառումների ժամանակ:

[1]Տեր-Կասպարով Բ., Արդարադատությունը Լեռնային Ղարաբաղում (1923-2003թթ), Ստեփանակերտ, 2005, էջ 27:

Ինչպես գրում է Եղիշե Իշխանյանը, ովՄովսես Մահտեսի Բաբայանին ճանաչում էր Շուշու ռեալականից, Մովսեսը մտահոգված էր հեղափոխության հետ կապված իրավիճակով: Հայ սպաները որոշել էին դիմել կառավարությանը, որպեսզի թույլ տա իրենց փոխադրվել Կովկասյան ճակատ: Մովսեսը երկու հարյուր հիսուն զինվորներ է հավաքում, ներկայանում զինվորական նախարարին, բայց դանդաղում էր հայ զինվորներին Կովկասյան ճակատ ուղարկելը:Մովսեսը զոհվում է Արևմտյան ճակատում: Նրա մեծ եղբայրը՝ Զաքարը, ճակատից դին բերում, ամփոփում է Վարանդայի Գիշի գյուղի գերեզմանատանը[1]:

Մովսեսի հայրը՝ Խոջա Սարգիսը, ժամանակին ակնածանքով ընդունել էր Խրիմյան Հայրիկին, այնպիսի գորգ փռել նրա ոտքերի տակ, որն արժանացել էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրությանը: Ինչպես վկայում է Խոջա Սարգիսի թոռը՝ Հայրապետ Բաբայանը, այդ գորգը գտնվում էր Էջմիածնում:

Փորձում եմ հասկանալ հորս պատմածը: Հայրս՝ Ենոք Բաբայանը, Գիշու դպրոցի վաստակաշատ ուսուցիչներից էր: Նա ոչ մի խմբակցության, կուսակցության անդամ չէր դարձել: Ավագ եղբոր մասին խոսելիս երբեմն հիշում էր մոր պատմածը, որ թևանիստները գիշերը հանկարծակի եկել էին Անդրեյին բռնելու, ով լենինյան գաղափարներով ոգևորված կոմունիստ էր: Երևի նա տեղյակ էր և անտառներով փախել էր մորական Նենգի գյուղը: Երբ թևանիստները տեսնում են պատից կախված նկարը, խաչակնքելով հեռանում են՝ ասելով. «Սա Տեր հոր տուն է, թե կոմունիստի»: Եվ Խորհրդային երկրի մարդուն հետաքրքիր չէր՝ ո՞վ է Տեր հայրը, չնայած երբեմն գնում էինք Ոսկի խաչ սրբատեղին, մոմ վառում, մատաղ անում: Հայրս էլ չէր խոսում այդ մասին, բայց երբ 1965-ին Երևանում բուհի ընդունելության քննություններ էի հանձնում,իր հորեղբոր տղայի հետ, ով իր որդուն Զավեն էր անվանել, նկարվել էր Գայանե վանքի բակում թաղված հորեղբոր՝ Մայր աթոռի միաբան, եպիսկոպոս Զավեն Մահտեսի Բաբայանի շիրմաքարի մոտ, Հ Թուրշյանի «Սարդարապատի ճակատամարտը » գրքում կարմիր մատիտով ընդգծել հորեղբոր և Մահապարտների գնդի մասին պատմող հատվածները. «Դաշնակցության անդամալուծության և այլ պարտիաների բացակայության այդ տարտամ և հոգեվարքային օրերին հայ զորքին խանդավառելու և ժողովրդին ինքնապաշտպանական կռվիտքի հանելու գործում մեծ նախաձեռնություն ցույց տվին Էջմիածնի հոգևորականներից ոմանք, հատկապես ճեմարանի տեսուչ, հայտնի հայագետ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Էրզրումի առաջնորդ Զավեն եպիսկոպոս Մահտեսի Բաբայանը, վարդապետներ Եզնիկը, Դանիելը և Թադևոսը»[2]:

Հեղինակը նշում է, որ Գարեգին և Զավեն եպիսկոպոսները մայիսի 22-ի վաղ առավոտյան ձի հեծած գնում են Էջմիածնի մոտակա Հայի Ձեյվա և Քյորփալու գյուղերը: Վերջինս որպես Էրզրումի թեմի առաջնորդ Երզնկայից մինչև Արարատյան դաշտը հաճախ էր եղել ռազմաճակատի առաջին գծերում, իսկ անշուք ուվտիտ Գարեգին եպիսկոպոսը՝որպես գրքի ու գիտության մարդ, առաջին անգամն էր կռվի դաշտ գնում: Նրա զենքը պերճախոսությունն է: Նա մահապարտներ է անվանում հայ ժողովրդին ու նրա զորքին, 5-րդ գունդը վերանվանում է Մահապարտների գունդ և նրան երդվեցնում կռվի դուրս գալ անկախ ու աննահանջ: Երկու եկեղեցականները,

[1] Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ(1917-1920), Երևան, 1999, էջ 4-5:
[2]Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1968, էջ 128-129:

խաչը ձեռքին բարձր պահած, ընկնում են զորքի առաջ և հրամանատար գնդապետ Պավել Փիրումյանի հետ միասին նրանց առաջնորդում դեպի իմացյալ մահ: Մայր տաճարի զանգերը ղողանջում են, որոնց ձայնակցում են բոլոր վանքերի եկեղեցիների զանգերը, և այդ ահասարսուռ ահազանգը ութ օր շարունակ (մայիսի 22-ից մինչև մայիսի29-ը) տարածվում էր ամենուր: Միաբանները ոտքի են ելնում, Եզնիկ, Դանիել, Թադևոս վարդապետները Սարդարապատի վրա կռվի են տանում հինգ հարյուր պատանքավոր, որոնք միջնադարյան կրոնական պատերազմների անձնազոհությամբ կռվում էին Մահապարտների 5-րդ գնդի աջ թևում[1]:

1911թ. մարտից Զավեն Մահտեսի Բաբայանը աշխատել է Շուշիում. «Բագուի Հայոց եկեղեցիների գործակալ տ. Զաւէն վարդապետին կարգել Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի նախանդամ, որը թեմի առաջնորդ չլինելու պատճառով պէտք է վարի կոնսիստորիայի և տեղական հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան նախագահողի պաշտօնը»[2]:

Սանդրո Բեհբուդյանը, հիմք ընդունելով վավերագրերը, իր գրքի առաջաբանում նշում է, որ Հայ եկեղեցին միշտ ընդգծված նախանձախնդիր վերաբերմունք է ունեցել մանուկների դաստիարակության խնդիրների հանդեպ, այդ ոլորտըմիշտ եղել է հոգածության առարկա[3]: Այդ է վկայում նաև Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն վարդապետի ստորագրությամբ 1912թ. վավերագիրը: Տեղեկագիրը սկսվում է երկրի աշխարհագրական դիրքի բնորոշմամբ, տրվում են հոգևոր-վարչական բաժանման սահմանները, հոգևորականների թվաքանակն ու կրթական մակարդակը. «Անվիճելի է, որ ներկայումս կեանքը նախկին տարիների համեմատութեամբ աւելի առաջ է գնացել. առաջ, որ քահանան գիւղի միակ գրագէտ և «կարդացած» մարդն էր համարւում, այժմ արդէն յետին շարքերն է անցել, որովհետև թէ՛ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների և թէ պետական դպրոցների գոյութիւնը գիւղերում տարեցտարի տալիս է գրագէտ գիւղացիների աւելի թիւ, որովհետև գիւղ են գալիս քաղաքներում պանդխտութեան ժամանակ գրագէտ դարձած գիտակ մարդիկ իրենց նոյնիսկ միջնակարգ դպրոցներում մի քանի տարի ուսած զաւակներով և գիւղը միանգամայն փոխւում է իր նախկին դրութիւնից: Այժմ արդէն մեր գիւղացիները պահանջ են զգում ուսման, գիտութեան, ընթերցանութեան, նոյնիսկ լրագրութեան, որի միջոցով մասնակից են դառնում իրենց հետաքրքրութեամբ ոչ միայն հայ ազգի, ոչ միայն հարևան ազգերի կեանքին, այլև հետաքրքրւում են հեռու անծանօթ երկրներում տեղի ունեցող երևոյթներով և դէպքերով»[4]:

Բարձրաստիճան հոգևորականը անհանգստանում է, քանի որ աշխարհականների մեջ արդեն շատ են բանիմաց, ուսյալ մարդիկ, մինչդեռ քահանաներից շատերը, հակառակ իրենց կոչման, ծույլ են, գցում են հոգևոր պաշտոնյաների «յարգն ու պատիւը», զուրկ են անգամ Աւետարան և այլ գիրք կարդալու, հասկանալու ընդունակությունից ու կարողությունից: Գյուղերում տեղի ունեցող այդ մտավոր

---

[1] Թուրշյան Հ., նշվ.աշխ., էջ 128-131:

[2] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան,գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը(1813-1933թթ.): Կազմեց և առաջաբանը գրեց Սանդրո Բէհբուդեանը, Երևան, 2001, էջ 527:

[3] Նույն տեղում, էջ 22:

[4] Նույն տեղում, էջ 547-548:

փոփոխությունները վատ են ազդում եկեղեցու, կրոնի վրա, «ոչնչութեան է հաւասարում մեր քահանաների նշանակութիւնը, որոնք իրենց տգիտութեամբ են միայն աչքի ընկնում (Բացառությունները միշտ յարգելի են) »: Ըստ նրա՝ անհրաժեշտ են կրթված, աչքաբաց քահանաներ, որոնք կարողանան կենդանի խոսքով ժողովրդին կապել կրոնի, եկեղեցու և հոգևորականության հետ: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել նոր ձեռնադրվող քահանաների կրթության վրա և քահանայական վկայական տալ թեմական դպրոցների ավելի բարձր դասարանների ցենզ ունեցողներին, որովհետև «պահանջուելիք ցէնզերը չեն համապատասխանում ինչպէս ժողովրդի, այնպէս և ժամանակի հրամայողական պահանջներին»[1]:

Զավեն Մահտեսի Բաբայանի մասին հիշողություններ ունի Շուշիի թեմական հոգևոր դպրոցի շրջանավարտ Աբրամ Կիսիբեկյանը: 1912-ին, երբ դեռ թեմական դպրոցի աշակերտ էր և ապրում էր Սառա Ղասումյանի տանը, 1905-1906 թ.թ. շարժման ակտիվ մասնակիցներից մեկը՝Հայրում Վարդանյանը, Զանգեզուրից եկել էր և մի քանի օր մնում էր նույն տանը: Մի օր Հայրումն իրեն ուղարկում է Ներսես Բաբայանին կանչելու (Գիշեցոց տները գտնվում էին Մեղրեցոց եկեղեցու ներքևով անցնող ճանապարհի տակը, իսկ Ներսեսը Մովսեսի եղբայրն էր, ով կրթություն էր ստացել Շվեյցարիայում): Տարիներ հետո նա իմանում է, որ Հայրումը և Ներսեսը գնացել են Զավեն հայր սուրբի մոտ, ով այդ ժամանակ Ղարաբաղի թեմի առաջնորդն էր, լավ ծանոթ էր Հայրումի գործունեությանը: Հայր Սուրբը միջոցներ է հայթայթում, նրան ճանապարհում Բաքու: Հուշագիրը լավ վերաբերմունքով է հիշում նրանց «....անզուգական Սառա բաջին իր մայրական հոգատարությամբ դեպի հալածականները, Հայրումը՝ գլուխը փաթաթած, խորհրդավոր, մաշված, բայց հպարտ դեմքով ու վեհ հայացքով, Զավենը՝ իր հաղթանդամ հասակով, փառավոր միրուքով, ազնիվ ու բարի աչքերով և մեր փոքրիկ Ներսեսը իր «յակիշ» մահուդի կարճ բլուզը հագին, անհոգ, ուրախ ու ժպտերես»[2]:

Մեկ ուրիշ առիթով Կիսիբեկյանը գրում է, որ Զավեն հայր սուրբը շատ մտերիմ ու հարազատ վերաբերմունք ուներ դեպի Թեմական դպրոցի շրջանավարտները, մանավանդ նրանց նկատմամբ, ովքեր ավարտել էին Հայր սուրբի առաջնորդության տարիներին[3]:

1911-ին Զավեն վարդապետը նշանակվելով Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ՝ սեպտեմբերին ընտրությունների միջոցով վերակազմավորում է Թեմական դպրոցի հոգաբարձուական կազմը: Նյութական ծանր վիճակում էր դպրոցը, նույնիսկ ուսուցիչները չէին կարողանում կանոնավոր աշխատավարձ ստանալ: Այդպիսի պայմաններում Զավեն վարդապետը բարձրացնում է դպրոցի հոբելյանը նշելու հարցը[4]: Դա մի պատեհ առիթ էր հասարակության ուշադրությունը դպրոցի անմխիթար դրության վրա դարձնելու համար: Զավեն վարդապետը 1912-ին դիմում է Թիֆլիս, Բաքու, Մոսկվա, այնտեղ ապրող ղարաբաղցիների շրջանում արծարծում Թեմական դպրոցի 75-ամյակը նշելու հարցը: Տոնախմբության

[1] Նույն տեղում, էջ 547:

[2] Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ.1, Երևան,, 2011, էջ 180-181:

[3] Նույն տեղում, էջ 189:

[4] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի, 1838-1913, Թիֆլիզ,1914, էջ 618:

ժամանակը որոշվում է 1913 թվականը[1]: Միաժամանակ Ղարաբաղի Հայոց թեմական դպրոցի հոգաբարձության նախագահ Զավեն վարդապետը պաշտոնական գրություն է ուղարկում Լեոյին. «Ձեզ ևս քաջ յայտնի է որ Ղարաբաղի թեմական ազգային դպրանոցը ներկայ թուականին բոլորում է իր գոյութեան 75 ամեակը... Այդ նշանաւոր տօնի առթիւ Հոգաբարձութիւնը անհրաժեշտ համարելով գրել դպրանոցի պատմութիւնը՝ իւր ամսոյս 23-ի նիստում որոշել է խնդրել Ձեզ յանձն առնել այդ աշխատանքը կատարելու, որպէս սրտացաւ և ջատագով հայրենակից և քաջ ծանօթ դպրանոցի անցեալի հետ[2]»:

Թեմական դպրոցի հոբելյանական տոնակատարությունների համար ստեղծվում է Կենտրոնական հոբելյանական հանձնաժողով, որի նախագահ, Արցախի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն վարդապետի հայտարարության համաձայն՝ դպրոցի հոբելյանը որոշվում է տոնել 1913 թվականի օգոստոսի 10-11-ին: Դպրոցի հոբելյանի նախապատրաստական աշխատանքները սկսվում են նաև դպրոցի նյութական ապահովության համար դրամահավաքության գործով:

1912 թվականի փետրվարի 15-ին Զավեն վարդապետը խնդրանքով դիմում է Գևորգ Ե կաթողիկոսին՝ Թեմական դպրոցի հոբելյանը նշելու և ընդհանրապես կրթական գործի անապահով դրության բարելավման համար օրհնության և հորդորական թուղթ տալու դարաբաղցիների անունով՝ այդ բարենպատակ ու ազգօգուտ գործին նպաստելու համար: Թեմական դպրոցի հիմնադրման հոբելյանի առթիվ կայանալիք միջոցառումների նախապատրաստության համար Զավեն վարդապետը և Ս.Սինոդի անդամ Բաբկեն վարդապետը, ով նշանակվել էր Ս. Էջմիածնից հոբելյանական աշխատանքներին աջակցելու համար, տարաբնույթ աշխատանքներ են ձեռնարկում: Շուշի են մեկնում պատգամավորներ հայ ազգային-հասարակական, կրթական հաստատություններից, մամուլի, խմբակցությունների կողմից ներկայացուցիչներ, որոնց թիվը հասնում էր 90-ի: Ստացվում են շնորհավորական հեռագրեր, գրություններ, ուղերձներ, նվերներ, տպագրվում են գրքեր, տարբեր նյութեր[3]:

Տոնախմբությունները սկսվում են օգոստոսի 4-ին. Գանձասարի վանքում հոգեհանգիստ է կատարվում Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի գերեզմանի վրա: Այնուհետև Շուշիում սկսվում է հոբելյանական շաբաթը, լինում են գրական, երաժշտական երեկույթներ, դասախոսություն: Բուն տոնակատարությունը բաղկացած էր եկեղեցական հանդեսներից: Վերջում Թեմական դպրոցի մեծ դահլիճում հանդիսավոր ճաշ է տրվում, որին մասնակցում էր մոտ 300 մարդ: Նույն դահլիճում երեկոյան տեղի է ունենում գրական-երաժշտական երեկույթ: Լեոն այդ մասին գրում է. «Օգոստոսեան այս շքեղ տօնախմբութիւնները վերին աստիճանի հազուագիւտ ուրախացուցիչ երևոյթ էին Շուշու կեանքի մէջ: Մեծարուեց Ղարաբաղի ազգային մեծագործ հիմնարկութիւնը: Մեծարուեց ժողովրդի կրթական գործի 75-ամեայ հասակը: Գաւառական այս խուլ, մուրացկանութեան սովորած անկիւնը

[1]Նույն տեղում, էջ 629:

[2]Նույն տեղում, էջ 4:

[3]Քոչարյան Ա., Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարությունները ըստ ախիվային վավերագրերի,«Շուշին՝ հայկական մշակույթի օջախ» 2012թ. միջազգային գիտաժողովի նյութեր: «Կաճառ»,Շուշի, 2014., էջ 69-71:

անկեղծապէս ուրախութիւններ արաւ, ուրախութիւններ, որոնք գեղեցկացնում էին նոյնիսկ նրա բազմաթիւ սրտաճմլիկ աւերակները[1]»:

Զավեն Մահտեսի Բաբայանի օրոք Արցախում վերականգնվել է հայ պարբերական մամուլը, Շուշիում հրատարակվել է «Ղարաբաղ» թերթը: Նա հրատարակչական գործի ջատագովներից էր (Ս.Ավագյան):

Զավեն Մահտեսի Բաբայանը ծնվել է Արցախի Վարանդայի (այժմ՝ Մարտունու) շրջանի Գիշի գյուղում: Թաղված է Էջմիածնի ս.Գայանե վանքի բակում՝ Սարդարապատի հերոսների հարևանությամբ:

Եվ այսպես՝ տասնյակ տարիների հեռվից ծննդյան 140-ամյակի կապակցությամբ փորձեցինք ներկայացնել արցախցի հոգևորականներից մեկի կյանքի մի քանի դրվագներ:

Այսօրվա սերունդը վերադառնում է իր արմատներին, դաստիարակվում մեր աշխարհիկ և հոգևոր նվիրյալների օրինակով: Արցախյան ազատամարտի առաջին իսկ օրերից բազմաթիվ հոգևորականներ զինվորագրվեցին մեր պայքարին: Հայրենի հողն ազատագրելու համար կռվի դաշտ մեկնած հայ հոգևորականներն իրենց ներկայությամբ ազատամարտիկներին էին փոխանցում Ղևոնդ Երեցի, Գարեգին ու Զավեն եպիսկոպոսների ռազմաշունչ ոգին[2]:

Ամփոփում

Լրացել է արցախցի հոգևորական Զավեն Մահտեսի Բաբայանի ծննդյան 140-ամյակը: Նա 1911-16 թ.թ. եղել է Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ: 1913-ին նշվել է Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի 75-ամյակը, Արցախում վերականգնվել է հայ պարբերական մամուլը, Շուշիում 1911 թ. նոյեմբերին հրատարակվել է «Ղարաբաղ» թերթը: 1918 թ. մայիսին, երբ արդեն Էրզրումի թեմի առաջնորդն էր, նա և Գարեգին Հովսեփյանը, խաչը ձեռքին պահած, Սարդարապատի ճակատամարտում Մահապարտների գունդը առաջնորդել են դեպի իմացյալ մահ: Զ. Մ. Բաբայանը ծնվել է Վարանդայի (Մարտունու) Գիշի գյուղում, Մայր աթոռի միաբան էր, եպիսկոպոս, թաղված է Էջմիածնի ս. Գայանե վանքի բակում՝ Սարդարապատի հերոսների հարևանությամբ:

Завен Магтеси Бабаян (1876-1925)

О. Бабаян
к.ф.н., профессор, АрГУ

Резюме

Ключевые слова: *священнослужитель, Карабахская епархия, армянская епархическая школа, руководитель епархии Эрзрума, с. Гаянэ, полк смертников, битва Сардарапата.*

---

[1] Նշվ. աշխ., էջ 637-639:

[2] Ղանդիլյան Վ., Վրդ. Նավասարդյան Վ., Հովհաննիսյան Պ., Վրդ. Անանյան Շ., Հայոց եկեղեցու պատմություն(հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար), Երևան, 2013, էջ 95:

Исполнилось 140-летие священнослужителя родом из Арцаха Завена Магтеси Бабаяна. В 1911-1916гг, он работал временным правителем Карабахской епархии. В те годы, 1913г., отмечалось 75-летие Карабахской армянской епархической школы, в Арцахе восстановилась армянская периодическая печать, в ноябре 1911г. Стала издаваться газета “Карабах”. В мае 1918г., будучи руководителем епархии Эрзрума, он и Гарегин Овсепян, высоко держа крест в руках, в битве Сардарапата шли впереди полка смертников к осознанной смерти. Завен Магтеси Бабаян родился в селе Гиши, был монахом, епископом, похоронен во дворе церкви с. Гаяне Эчмиацина, по соседству с героями Сардарапата.

Zaven Mahtesi Babayan (1876-1925)

O. Babayan
Ph.D, professor, ASU

Summary

Key words: *clergyman, Karabakh Diocese, the Armenian diocesan seminary, the head ofErzurum Diocese, St. Gayane, regiment of suicide bombers, battle of Sardarapat.*

It has been celebrated the 140 anniversary of ZavenMahtesiBabayan. In 1911-1916 he was the temporal head of karabkhian diocese. In 1913, the 75-years of karabkhian Armenian diocesan school was celebrated under his leadership and the periodical press of Artsakh was reformed. The journal <<Karabakh>> (1911, November) was published in Shushi. In May 1918, being already the head of Erzrum diocese, ZavenBabayan together with GareginHovsepyan holding the cross high in hand, was going to his doom in the battle of Sardarabad. ZavenMahtesiBabayan was born in the village of Gishi. He was a monk, bishop and is buried in the yard of St. Gayane's Church, Etchmiadzin, in the neighbourhood of Sardarabad heroes.